

ժարանի վերածուած է 930 և 950 տարիներու միջև: Յոյն ուխտաւորը ուրեմն 930 սեպտ. Տին փա՛կ գտած էր եկեղեցիին դուռը: Բայց վիսազորաքիւնը, եթէ կարող վիմագրագէտներ միեւնոյն եղանակաւ մեկնեն զայն, վճռաբար պիտի ապացուցանէ թէ եկեղեցիին ճակատը գոյութիւն ունէր այն տարւոյն մէջ: Եւ որովհետեւ այս թուականէն յառաջ կատարուած նորոգութեան վերջին թուականը Եղիա պատրիարքի թուականը եղած է, ճակատը (façade) իր երրորդ գուռէն և անդաստակէն զրկուած, 880էն յառաջ շինուած կ'ըլլայ, կուենդն կարողութի թագաւորութեան վախճանին:

Եկեղեցիին շինուածքին մէջ կը տեսնուին ուսմանական տղեկ խոյակներ՝ քիչ մը աւելի հին, հաւանաբար Մեծն կարողութի նըպաստներովը և թերևս գործաւորներով շինուած՝ 800ի մեծ նորոգութեանց ժամանակ: Երկրաշարժը Պաղեստինի մէջ բազմաթիւ եկեղեցիներ կործանած էր, այս երկիւղով շինուած են այս կրկնակ կամարները խոյակներով և զանոնք կրող կիսասիւններով: Բայց ասոնք մեծապէս փոխած են Ս. Յովակիմ-Աննայի եկեղեցւոյն տեսքը:

Երբ մտքով վերցնենք ուսմանական խոյակները կրող կիսասիւնները՝ պիտի գտնենք նախնական զարերու մեծապայծառ մայր եկեղեցին: Մոյթերու կտրուածքը (coupe) լայնկեկ յունական խաչի մը ձևն առած է: Կեդրոնական գաւիթին մէջ, մեծ կիսասիւններ հողէն վեր բարձրանալով իրենց գագաթին վրայ երկու շքակահերով (consoles) կը կրեն կամարներու ամբողջ պարանոցը (retombée): Արտաքին կողմը որմայեցեր չկան, սրածայր կամարները՝ որ, ըստ ճարտարագետներու, միապողպղ կափարիչ մը կ'ըլլան, պէտք չունին այս նախազուշութեան: Երեք գաւիթներուն մէջ կան միայն ուսմանական սրածայր կամարներ: Խաչաթևերուն երկու կամարները որբանածե են:

Հարաւային կողակը և գաւիթը, ինչպէս աւելի հին եկեղեցիներու մէջ, նուազ լայն և նուազ բարձր են քան հիւսիսային գաւիթը և կողակը:

Մայրայեղորէն համեստ դարգարանքը կը կեդրոնանայ այն ուսերուն (consoles) վրայ որոնց ամէնքն ալ կը վերաբերին նախնական եկեղեցւոյն:

Այս եկեղեցւոյն բարձր հնութեան տեսակէտով ուշադրու-